Փակ դուռը



Ջա՜նգ

Էմբեր Հիլի
(Հիմնված է իրական պատմության վրա)

«Ապավինիր այն Հոգուն, որն առաջնորդում է բարիք գործել»
(Կարդապետություն և Ուխտեր 11 . 12):

Գուցե Էմման կարող է օգնել:

Էմման ցատկում էր քարե մայթի ճեղքերի վրայով: Պայծառ, արևոտ օր էր: Նա մայրիկի հետ գնում էր մթերային խանութ:

«Մայրի՛կ, արևը որքա՞ն հեռու է»,- հարցրեց նա:

«Ես ստույգ չգիտեմ»,- պատասխանեց մայրիկը:

Էմման նայեց երկնքին: «Ի՞նչ ես կարծում՝ հնարավո՞ր է, որ մի օր արբանյակ թռնի դեպի արևը: Այն կայծակից է՞լ թեժ է: Ի՞նչ ես կարծում . . .»:

Մայրիկը ծիծաղեց: «Հարցերդ գնալով ավելի՜ ու ավելի՜ են բարդանում»:

Էմման նույնպես ծիծաղեց: Նա բազմաթիվ հարցեր ուներ: Մայրիկը միշտ ջանացել էր պատասխանել դրանց: Դա պատճառներից մեկն էր, թե ինչու էր Էմման սիրում զբոսնել մայրիկի հետ:

Էմման նայեց շուրջը: Տաքսիները սլանում էին քարապատ փողոցով: Մարդիկ հեծանիվ էին քշում: Շատ մարդիկ նույնպես դուրս էին եկել զբոսնելու:

Հետո Էմման նայեց փողոցի մյուս կողմը: Մի փոքրիկ աղջիկ նստած էր բազմաբնակարան շենքի դիմացի աստիճաններին: Նա կարծես լաց էր լինում:

Էմման դանդաղեցրեց քայլերը: Գուցե նա պետք է կա՞նգ առներ և օգնե՞ր: Իսկ միգուցե աղջիկն ուզում էր մենակ մնալ: Երբեմն տխուր պահերին Էմման ցանկանում էր մենակ մնալ:

Էմման կանգնեց: Օգնության կարիք ունենալիս Էմման հիմնականում ցանկանում է ինչ-որ մեկի հետ խոսել: Հնարավոր է, որ *ինքը* կարող է օգնել:

Նա բռնեց մայրիկի ձեռքը: «Մայրի՛կ, տե՛ս: Ինձ թվում է այն աղջիկը օգնության կարիք ունի»:

Մայրը նայեց փողոցի մյուս կողմը: «Դու ճիշտ ես»:

Փողոցն անցնելիս Էմման բռնել էր մայրիկի ձեռքը: Նա բարձրացավ աստիճաններով դեպի այնտեղ, ուր նստած էր աղջիկը: «Բարև»,- ասաց Էմման: «Կարո՞ղ եմ օգնել քեզ»:

ՆԱԽՈՆԵՐԸ՝ ԱՐԹՈՒՐ ԼՈՒՐ

Փոքրիկ աղջիկը հեծկլտալով նայեց նրանց: Նա ձեռքերով գրկել էր ծնկները, իսկ աչքերը կարմրած ու այտուցված էին:

«Իմ . . . տան դուռը փակվել է, ես դուրսն եմ մնացել»: Նա հոգոց հանեց: Նա ցածր ու դողացող ձայնով էր խոսում: Էմման կքանստեց նրա կողքին, որպեսզի կարողանա լսել նրան:

«Ես չեմ կարող կարդալ», - ասաց աղջիկը: «Ես չգիտեմ, թե որ կոճակը սեղմեմ, որ ներս մտնեմ»:

Էմման նայեց շենքի արտաքին պատին: Բազմաթիվ փոքրիկ կոճակներ կային: Յուրաքանչյուրի վրա անուն կար գրված: Կոճակների կողքին բարձրախոսն էր:

«Կասե՞ս քո ազգանունը»,- հարցրեց Էմման:

«Շնայդեր»,- պատասխանեց փոքր աղջիկը:

Մայրը հերթով կարդաց կոճակների վրա գրված ազգանունները, մինչև գտավ այն մեկը, որի վրա գրված էր «Շնայդեր»: Նա սեղմեց այն:

Ջա՜նգ:

Կոճակը բարձր զնգաց: Ապա մի ձայն խոսեց բարձրախոսի մեջ:

«Շնայդերների բնակարանն է: Ինչո՞վ կարող եմ օգնել»:

Էմմայի մայրն ասաց . «Ողջո՜ւյն: Ես ու դուստրս դրսում ենք մի աղջնակի հետ, որն ասում է, որ դրսում է մնացել»:

Աղջիկը արագ կանգնեց ու վազեց դեպի բարձրախոսը: «Մայրի՛կ,- ասաց նա,- ես չէի կարող գտնել մեր տան կոճակը՝ ներս մտնելու համար, և այս մարդիկ օգնեցին ինձ»:

Բարձրախոսից ինչեց զարմացած ձայն: «Լենի՛: Ես կարծում էի, թե դու քո սենյակում ես: Մի անհանգստացիր: Ես հիմա իջնում եմ այդտեղ»:

Մի քանի րոպե անց դուրս վազեց մի կին: Աղջիկը վազեց և փաթաթվեց նրան:

Կինը դիմեց Էմմային: «Շնորհակալությո՜ւն, իմ փոքրիկ Լենիին օգնելու համար»:

Էմման ժպտաց: «Դժվար չէր օգնել»:

Նրանք ցտեսություն ասացին և աստիճաններով ներքև քայլեցին: Էմմայի ամբողջ մարմինը ջերմացավ: Նա մի հարց էլ մտածեց մայրիկին տալու համար:

«Այդ աղջկան օգնելը հեշտ էր: Բայց ինչո՞ւ եմ ես այդքան երջանիկ այդ կապակցությամբ»:

Մայրը սեղմեց Էմմայի ձեռքը: «Դա Սուրբ Հոգին է ասում քեզ, որ լավ ընտրություն ես կատարել»:

Էմման ժպտաց: Նա ուրախ էր, որ կանգ առավ և օգնեց: ●

Այս պատմությունը տեղի է ունեցել Կենտրոնական Հունգարիայում: Հեղինակն ապրում է Յուտայում (ԱՄՆ):